ՀՀ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱՇԱՀԱՌՈՒ ԽՄԲԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

18.07.2017թ. | ժամը 11:00-12:00 | Հայաստանի ամերիկյան համալսարան

Մասնակիցներ՝ **Բազմաշահառու խմբի անդամներ**

Նախագահող՝	Դավիթ Հարությունյան	ՀՀ արդարադատության նախարար
	Կարեն Իսախանյան	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի տեղակալ
	Տիգրան Խաչատրյան	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ
	Դավիթ Անանյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
	Խաչիկ Հակոբյան	ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ
	Վահե Վարդանյան	«Գեոմայնինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գլխավոր տնօրեն
	Սոնա Այվազյան	«Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն
	Արթուր Գրիգորյան	«Էկոիրավունք» հասարակական կազմակերպության նախագահ
	Արթուր Համբարձումյան (ԲՇԽ ժամանակավոր անդամ)	«Հասարակական ձայն» («Սիվիլ Վոյս») հասարակական կազմակերպության խորհրդի անդամ
	Ինգա Զարաֆյան	«Էկոլուր» տեղեկատվական հասարակական կազմակերպության նախագահ
Ներկաներ՝ տեսակապի միջոցով	Պերճ Խաչատրյան	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության իրավաբանական դեպարտամենտի ղեկավար

Արմեն Ստեփանյան	«Լիդիան Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կայուն զարգացման գծով ավագ կառավարիչ

ՀՀ կառավարության աշխատակազմ

Լիլիա Շուշանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի «Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավում» ծրագրի ղեկավար
Դավիթ Շինդյան	ՀՀ կառավարության աշխատակազմի «Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավում» ծրագրի փորձագետ

Հյուրեր՝

Ջուդիթ Մարգարեթ Ֆարնուորթ	Հայաստանում ՄԹ դեսպան
Արտաշես Դավթյան	Հայաստանում ՄԹ դեսպանություն
Ալեն Ամիրխանյան	Հայաստանի ամերիկյան համալսարան
Մերի Գալստյան	Հայաստանի ամերիկյան համալսարան
Կարապետ Վարդանյան	ՀՀ վարչապետի օգնական
Նարինե Թադևոսյան	Համաշխարհային բանկի գրասենյակ Հայաստանում
Անահիտ Խաչատրյան	ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն
Շուշանիկ Քերոբյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն
Լուսինե Մարտիրոսյան	ՀՀ արդարադատության նախարարություն
Սոնա Գրիգորյան	ՀՀ արդարադատության նախարարություն
Նելլի Հարությունյան	«Արմենիա Թի-վի»

Բացականեր՝

Վարդան Գևորգյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ

	Արթուր Նիկողոսյան	«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի խորհրդական
	Հարություն Մովսիսյան	Երևանի պետական համալսարանի Օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման ամբիոնի դոցենտ, Կայուն զարգացման կենտրոնի փորձագետ
Արձանագրող՝	Դավիթ Շինդյան	

ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՐՑԵՐ

1. ՀՀ ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի նիստի բացում

Դ. Հարությունյանը ողջունեց նիստի մասնակիցներին և առաջարկեց անցնել նիստի օրակարգի հարցերի քննարկմանը: Ներկայացվեցին օրակարգային հարցերը (2017 թվականի 2-րդ եռամսյակի ամփոփումը և առաջիկա ամիսների աշխատանքների պլանավորումը), ապա նշվեց, որ նիստը նախորդներից կտարբերվի այն առումով, որ օրակարգային մի շարք հարցեր քննարկելուց բացի կհայտարարվի Հայաստանում ԱՃԹՆ-ի գործընթացին աջակցող նոր նախաձեռնության («Աջակցություն Հայաստանի կարողությունների բարելավմանը՝ ԱՃԹՆ-ն իրագործելու և ընդերքօգտագործման թույլտվությունների ու պայմանագրերի թափանցիկության և հաշվետվողականության բարձրացման համար» ծրագիր) մեկնարկի մասին:

2. Ողջույնի խոսք ՄԹ դեսպան Ջ. Մ. Ֆարնուորթի կողմից

Հայաստանում ՄԹ դեսպան **Ջ. Մ. Ֆարնուորթը** ողջունեց նիստի մասնակիցներին «Աջակցություն Հայաստանի կարողությունների բարելավմանը՝ ԱՃԹՆ-ն իրագործելու և ընդերքօգտագործման թույլտվությունների ու պայմանագրերի թափանցիկության և հաշվետվողականության բարձրացման համար» ծրագրի մեկնարկի կապակցությամբ: Նա նշեց, որ Բրիտանական դեսպանատան կողմից վերջին տարիներին ֆինանսավորվող ծրագրերից ամենանորն է: Դեսպանը շնորհավորեց ԱՃԹՆ-ի թեկնածու երկրի կարգավիճակ ստանալու կապակցությամբ և նշեց, որ մեկնարկող ծրագրի նպատակն է՝ օժանդակել ԱՃԹՆ-ին ամբողջական անդամակցության համար անհրաժեշտ ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի հրապարակմանը: Դեսպանը շնորհակալություն հայտնեց Հայաստանի ամերիկյան համալսարանի պատասխանատու

հանքարդյունաբերության կենտրոնին (ՀԱՀ ՊՀԿ), որ հանդիսանում է ծրագրի իրականացնող գործընկերը:

Ի պատասխան դեսպանի խոսքին՝ **Դ. Հարությունյանը** նշեց, որ նոր ծրագրի իրականացումը հնարավոր չէր լինի առանց շահագրգիռ մասնակցության և աջակցության: Նա շնորհակալություն հայտնեց դեսպանին և նշեց, որ ծրագիրը կարևոր փուլ է՝ ԲՇԽ-ի հետագա քայլերի կատարման համար, որոնք նախանշված են 2017-2018թթ. ՀՀ ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրով: Նշվեց նաև, որ ՀԱՀ ՊՀԿ-ին կաջակցեն բրիտանացի փորձագետները: Հայտարարվեց, որ ծրագրի արդյունքների բուն սպառողը ԲՇԽ-ն է, և աշխատանքային խմբերի միջոցով պետք է ամենօրյա աշխատանք տարվի թե ՀԱՀ ՊՀԿ-ի, թե բրիտանացի փորձագետների հետ՝ աջակցելով ծրագրի հաջող իրագործմանը: Դ. Հարությունյանը առաջարկեց անցնել նիստի օրակարգի հաջորդ հարցերին:

---

3. «Աջակցություն Հայաստանի կարողությունների բարելավմանը՝ ԱՃԹՆ-ն իրագործելու և ընդերքօգտագործման թույլտվությունների ու պայմանագրերի թափանցիկության և հաշվետվողականության բարձրացման համար» ծրագրի ներկայացում

Ա. Ամիրխանյանը ընդհանուր գծերով ներկայացրեց «Աջակցություն Հայաստանի կարողությունների բարելավմանը՝ ԱՃԹՆ-ն իրագործելու և ընդերքօգտագործման թույլտվությունների ու պայմանագրերի թափանցիկության և հաշվետվողականության բարձրացման համար» ծրագիրը: Ա. Ամիրխանյանը նշեց, որ աշխատանքը բավականին ծավալուն է, ներառում է բազմաթիվ բաղադրիչներ, որոնք պետք է իրականացնել սեղմ ժամկետներում: Այնուհետև նիստի մասնակիցները տեղեկացվեցին աշխատանքների իրականացման ընթացքի, առկա խնդիրների և ԲՇԽ-ի անդամներից ակնկալիքների մասին: Ներկայացվեցին ծրագրի բաղադրիչները՝

- ԱՃԹՆ-ի զեկույցի նախնական ուսումնասիրություն,
- օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի վերլուծություն, ներառյալ՝ իրական սեփականտերերի վերլուծություն,
- հանրային հաղորդակցության ռազմավարություն,
- ՋԼՄ-ների և պետական մարմինների ներկայացուցիչների վերապատրաստում:

Ներկայացվեցին նաև աշխատանքների իրականացման ժամկետները, ինչպես նաև բերվեցին Մալավիի և Գերմանիայի ԱՃԹՆ-ի ազգային զեկույցների նախնական ուսումնասիրությունների օրինակները:

Քննարկվեց՝ արդյոք ուսումնասիրություններում ներառվելու են հանքի փակման վերաբերյալ տարրեր: Որպես պատասխան նշվեց, որ ԲՇԽ-ն կարող է ընդունել ուսումնասիրություններում նման դրույթ ներառելու որոշում: Այնուհետև **Ա. Գրիգորյանի** կողմից արտահայտվեց հետևյալ կարծիքը. «Ես ուզում եմ մի հատ միանման հասկանալ իրավիճակը: EITI ստանդարտ ասելով՝ Հայաստանի կոնտեքստում հասկանում եմ սենց. ԲՇԽ-ն իր ընդունած աշխատանքային ծրագրով սահմանած կետերը, որոնք որ ենթադրում են բուն ստանդարտի և մյուս country priority-ների ամփոփ ներկայացում, դա մեզ համար հենց EITI ստանդարտն է: Եվ երկրորդը, scoping study-ի հետ կապված: Կարծում եմ, որ scoping study-ի կառուցվածքը պետք է հիմնված լինի հենց մեր աշխատանքային ծրագրի վրա, որովհետև անկախ ադմինիստրատորը պետք է գնահատի դրա իրականացումը, ԲՇԽ-ը պետք է հաստատի դրա implementation-ը, և ես հասկանում եմ, որ scoping study-ի structure-ը պետք է կառուցված լինի հենց մեր աշխատանքային ծրագրի վրա, որտեղ որ ներառված են նաև responsible mining-ի դրույթը և որտեղ պետք է լինեն բնապահպանական-սոցիալական հարցեր: Ուզում եմ միանման հասկանանք, որ հետագայում թյուրընկալումների տեղիք չտա, այսինքն ստանդարտը այն է, ինչ որ ԲՇԽ-ն սահմանել է աշխատանքային ծրագրով, scoping study-ն պետք է կառուցված լինի աշխատանքային ծրագրի վրա: Ես ճի՞շտ եմ հասկանում»: **Ն. Թադևոսյանի** կողմից որպես պատասխան նշվեց, որ նախնական ուսումնասիրությունը ոչ թե աշխատանքային ծրագրի, այլ ԱՃԹՆ-ի հաշվետվության համար է կազմվում, ու թեև դրա մեջ կարող են ներառվել աշխատանքային ծրագրի որոշակի մասեր, նախնական ուսումնասիրությունը չի կազմվում աշխատանքային ծրագրի համար. հստակ պետք է տարանջատել՝ երկրի ԱՃԹՆ-ի հաշվետվությունն (զեկույցը) և ԲՇԽ-ի գործունեության տարեկան հաշվետվությունը. աշխատանքային ծրագիրը ստանդարտ չէ: Աշխատանքային ծրագիրը ստանդարտը իրագործելու գործողություններն են, իսկ նախնական ուսումնասիրությունն արվում է ԱՃԹՆ-ի զեկույցի համար՝ զեկույցի սահմանները և վերլուծության շրջանակները հասկանալու նպատակով: **Լ.Շուշանյանի** կողմից նշվեց նաև, որ համաձայն նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի՝ պետք է իրականացնել ԱՃԹՆ-ի հաշվետվողականության (զեկույցի կազմման և հրապարակման) համար անհրաժեշտ ամբողջական տեղեկատվական դաշտի գույքագրում՝ ըստ մակարդակների՝ ներկայացնելով, թե ինչ տեղեկություններ են հավաքագրվում պետական տարբեր մարմինների կողմից, ինչ տեղեկություն է հասանելի և որտեղ, այդ թվում՝ դրանց որ մասն է նախատեսված միայն ներքին օգտագործման, որը՝ այլ պետական մարմինների և որը՝ հանրության համար: Ընդգծվեց, որ նախնական ուսումնասիրությունում անհրաժեշտ է նաև անդրադարձ կատարել ԱՃԹՆ-ի զեկույցի համար անհրաժեշտ տվյալների առցանց՝ կայքի միջոցով

հավաքագրման հնարավորությանը՝ միաժամանակ դիտարկելով տվյալների ճշգրտության հանդեպ վստահության ապահովման համար տեխնիկական լուծումները:

Քննարկվեց նաև այն հարցը, որ ընդերքաբանական փորձաքննությունը իր մեջ պարունակում է գործառույթ՝ պաշարների հաստատման փուլում կատարելու երկրաբանատնտեսագիտական գնահատական, սակայն դա արդյունահանումը սկսելուց առաջ երկարաժամկետ ռազմավարական ծախսօգուտային գնահատական չի տալիս ծրագրին: Բացի այդ, կարծիք հնչեց, որ հանրային մասնակցություն չի ապահովվում՝ առաջացնելով թափանցիկության հետ կապված հարցեր: **Որոշվեց** ՀԱՀ ՊՀԿ-ի կողմից առավել խորությամբ ուսումնասիրել հարցը և ներկա վիճակը ու ներկայացնել ուսումնասիրություններում ներառելու կամ այլ ձևաչափերով քննարկելու հետ կապված առաջարկություններ:

Ա. Ամիրխանյանը նշեց, որ նախատեսվում են հանդիպումներ ԲՇԽ-ի աշխատանքային խմբերի հետ: Ներկայացվեց, որ հանրային հաղորդակցության ռազմավարության մեջ պետք է նաև նշվի, թե ԱՃԹՆ-ի կայքը ինչ տեղեկություններ պետք է պարունակի: Նշվեց, որ հանրային հաղորդակցության ռազմավարության վերջնական տարբերակը պատրաստ կլինի օգոստոսի կեսերին՝ հաշվի առնելով նաև ԲՇԽ-ի կողմից օգոստոսին ռազմավարությունը հաստատելու վերջնաժամկետի պահպանման կարևորությունը: **Հարց բարձրացվեց՝** առաջիկայում հանրային հաղորդակցության աշխատանքային խմբի հանդիպման կազմակերպման և ռազմավարության մշակմանը ԲՇԽ-ի համապատասխան աշխատանքային խմբի առավել արդյունավետ մասնակցության ապահովման մասին:

4. ՀՀ ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների 2-րդ եռամսյակի հաշվետվության ներկայացում և հաստատում

Ներկայացվեց ՀՀ ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների 2017 թվականի 2-րդ եռամսյակի հաշվետվության նախագիծը, որը նախապես տրամադրվել էր ԲՇԽ-ի անդամներին կարծիքների համար: Եռամսյակային հաշվետվության մեջ զետեղված են 2017 թվականի ապրիլ-հունիս ամիսներին իրականացված աշխատանքները՝ համաձայն ՀՀ ԱՃԹՆ-ի 2017-2018թթ. աշխատանքային ծրագրով հաստատված միջոցառումների: Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային ծրագրով սահմանված մի շարք աշխատանքներ (միջոցառումներ) են իրականացվել, մասնավորապես, ՀՀ կառավարության կայքի ԱՃԹՆ-ի ենթաբաժնում տեղեկատվության տեղադրում, «Հրապարակում» հեռուստածրագրի «Թափանցիկ հանքարդյունաբերություն» հաղորդաշարի 5 հաղորդումների պատրաստում և հեռարձակում, սոցիալական ցանցերում ԱՃԹՆ-Հայաստանի էջերի վարման աշխատանքներ, Վանաձոր և Կապան

մարզային այցելություններ, ԲՇԽ-ի և այլ շահագրգիռ կողմերի համար ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության քաղաքականության և տարածաշրջանի տնօրեն Դիվեկե Ռոգանի կողմից երկօրյա աշխատաժողովի անցկացում, ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների համար ԱՃԹՆ-ի և հայաստանյան գործընթացի վերաբերյալ տեղեկանքի պատրաստում և տարածում, ՀՀ կառավարության աշխատակազմի «Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավում» ծրագրի շրջանակում ԱՃԹՆ-ի ստանդարտի հայերեն թարգմանություն: Հաշվետու ժամանակահատվածում համագործակցություն է իրականացվել ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության հետ, ինչպես նաև կազմակերպվել են հանդիպումներ գործընկեր միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ (մասնավորապես՝ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի ներկայացուցչություն Հայաստանում, Հայաստանում ՄԹ դեսպանություն և այլն), որոնց ժամանակ քննարկվել են ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի իրականացմանն ուղղված համագործակցության ուղղությունները: Հանդիպումների արդյունքում հաշվետու ժամանակաշրջանում Հայաստանում ՄԹ դեսպանատունը պատրաստակամություն է հայտնել ֆինանսավորել ԱՃԹՆ-ի շրջանակներում երեք ուսումնասիրությունների մշակման աշխատանքներ (Հայաստանի ԱՃԹՆ-ի զեկույցի նախնական ուսումնասիրությունը, օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի վերլուծությունը, ԱՃԹՆ-ի հանրային հաղորդակցության ռազմավարությունը), որոնք պետք է իրականացվեն ՀԱՀ ՊՀԿ-ի կողմից, և ուսումնասիրությունների մշակման աշխատանքներն արդեն մեկնարկել են: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրմանն ուղղված մի շարք այլ ընթացիկ աշխատանքներ:

ՀՀ ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների՝ 2017 թվականի 2-րդ եռամսյակի հաշվետվության նախագիծը ներկայացվեց ԲՇԽ-ի հաստատմանը և **ընդունվեց** ԲՇԽ-ի ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով):

Հանձնարարվեց՝ երկշաբաթյա ժամանակատվածում ներկայացնել ԱՃԹՆ-ի ստանդարտի թարգմանության հետ կապված դիտողությունները՝ հետագայում ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքում զետեղելու համար:

5. ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրով հաստատված՝ օգոստոս-հոկտեմբեր ամիսներին իրականացվելիք աշխատանքների ժամանակացույցի քննարկում և հաստատում

Ներկայացվեցին ՀՀ ԱՃԹՆ-ի օգոստոս-հոկտեմբեր ամիսներին իրականացվելիք աշխատանքների ժամանակացույցի նախագծով նախատեսվող աշխատանքների ցանկն ու դրանց ժամկետները, մասնավորապես՝ ԱՃԹՆ-ի զեկույցի նախնական ուսումնասիրության

նախագծի քննարկում և հաստատում, անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքի քննարկում, օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի վերլուծության նախագծի քննարկում, հանրային հաղորդակցության ռազմավարության նախագծի քննարկում և հաստատում, համագործակցություն իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակման նպատակով ՎՋԵԲ-ի կողմից վարձված խորհրդատուի հետ, ԱՃԹՆ-ի ստանդարտի հայերեն թարգմանության հաստատում և տեղադրում ՀՀ կառավարության կայքի ԱՃԹՆ-ի ենթաբաժնում, Համաշխարհային բանկի դրամաշնորհի հայտադիմումի պատրաստում, սոցիալական գովազդների պատրաստում և հեռարձակում: Նշվեց, որ ուսումնասիրությունների մշակման ընթացքում նախատեսվում է ԲՇԽ-ի աշխատանքային խմբերի ներգրավվածություն: Եռամսյակային աշխատանքային ծրագրում ներառված են նաև ԱՃԹՆ-ի ներդրումն ապահովող ընթացիկ աշխատանքների իրականացումը, միջազգային համագործակցությունը և հանրային իրազեկման աշխատանքների իրականացումը:

ՀՀ ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրով հաստատված՝ օգոստոս-հոկտեմբեր ամիսներին իրականացվելիք աշխատանքների ժամանակացույցն **ընդունվեց** ԲՇԽ-ի ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով):

Ա. Գրիգորյանի կողմից նշվեց հետևյալը. «Ես կուզեմ մի դիտարկում անել. հաշվի առնելով, որ կառավարությունը հիմա մշակում է ընդերքօգտագործման ռազմավարություն, և մենք մեր աշխատանքային ծրագրում ունենք կետ, որ ԲՇԽ-ը մասնակցի այդ ռազմավարության մշակմանը կամ ոչ թե մշակմանը, այլ գոնե ինչ-որ կերպ հաղորդակցվի, թե ինչ պրոցես է ընթանում: Չգիտեմ՝ ինչ պրոցես է ընթանում: Բայց կարելի է մեր եռամսյակային գործունեության մեջ նաև այդպիսի մի կետ ներառել: Հաշվի առնելով, որ դա ուղղակիորեն փոխկապակցված է օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի ուսումնասիրման հարցերի հետ, ինչպես նաև scoping study-ի հարցերի հետ է փոխկապակցված, կարծում եմ: Երկրորդ դիտարկումը կուզեի անել, միգուցե ոչ այս եռամսյակում, բայց արդեն հաջորդ եռամսյակից մտածենք պատասխանատու հանքարդյունաբերության ճանապարհային քարտեզի մշակման հարցերի վերաբերյալ, որովհետև եթե իրավական և ինստիտուցիոնալ դաշտի ուսումնասիրման արդյունքում, մենք հանգեցինք, վեր հանեցինք, բնականաբար վեր էինք հանելու էն խնդիրները, որոնք կան, դրանից անմիջապես հետո պետք է սկսել, անմիջականորեն դրանից բխում է պատասխանատու հանքարդյունաբերության էլեմենտների կամ ճանապարհային քարտեզի մշակման հարցերը: Այսինքն էս երկու հարցը ինչ-որ կերպ շոշափենք էս եռամսյակում, որ կարողանանք հող նախապատրաստել հաջորդ եռամսյակից և ընդերքօգտագործման ռազմավարության, և պատասխանատու հանքարդյունաբերության էլեմենտների մշակման համար»:

Լ. Շուշանյանի կողմից հայտարարվեց, որ իրականացվող ուսումնասիրությունները ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրով նախատեսված ճանապարհային քարտեզներ մշակելու նպատակ ունեն, և ուսումնասիրությունները ու դրանց վերաբերյալ կարծիքները ստանալուց հետո մշակվելու է ճանապարհային քարտեզ: Իսկ ԱՃԹՆ-ից դուրս՝ հանքարդյունաբերության զարգացման նոր ռազմավարության մշակման աշխատանքներին կներգրավվի հանրությունը, այդ թվում՝ ԲՇԽ-ը: Միայն թե ռազմավարության մշակման աշխատանքներ առաջիկա եռամսյակում չեն նախատեսվում, դրանք իրականացվելու են հաջորդ տարի, այդ իսկ պատճառով այս փաստաթղթում դրա մասին հիշատակում չկա: **Ա. Համբարձումյանի** կողմից նշվեց, որ օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի վերլուծության արդյունքում կազմվելիք գործողությունների ծրագիրը կարող է ծառայել իբրև պատասխանատու հանքարդյունաբերության ճանապարհային քարտեզ:

Ա. Գրիգորյանի կողմից նշվեց հետևյալը. «Պարզապես աշխատանքային ծրագրով մենք ունենք ավելի լայն շրջանակ, mapping-ի, roadmap-ի մշակման, որը միգուցե ինչ-որ տեղ աղերս ունի գործողությունների պլանի մշակման հետ, բայց ինքը առանձին աշխատանքային խումբ է ենթադրվում»:

6. ԲՇԽ-ի անդամների կողմից բարձրացված այլ հարցերի քննարկում

Հայտարարվեց, որ ԱՃԹՆ-ի հայաստանյան կայքի կառուցվածքին, ինչպես նաև սոցիալական գովազդի հոլովակներին ավելի մանրամասն անդրադարձ կարվի հաջորդ հանդիպման ժամանակ՝ նշված հարցերի հետ կապված ընթացիկ աշխատանքներն ավարտելուց հետո: